ՀՊՏՀ ռեկտորի բարեմաղթանքը զինծառայության մեկնող, ինչպես նաև զինծառայությունից վերադարձած մեր ուսանողներին

Զորակոչային տարիքի ուսանողներին, ինչպես նաև զինծառայությունն ավարտած մեր ուսանողներին բարեմաղթանք է հղել ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը:

«Սիրելի ուսանողներ, շրջանավարտներ, հարազատ բուհը հպարտ է բանակ զորակոչվող իր սաներով: Հայոց բանակում ծառայելը յուրաքանչյուր երիտասարդի սրբազան պարտքն է, հայրենիքի սահմանների պաշտպանությունը՝ անառարկելի անհրաժեշտություն: Ձեր ամբողջ ծառայության ընթացքում մենք պարբերաբար հպարտանալու առիթներ ենք ունենում, քանի որ հաճախ ես տարբեր զորամասերից մեր ուսանողների օրինակելի ծառայության մասին շնորհակալագրեր եմ ստանում: Վստահ եմ, որ Դուք ևս համալրելու եք այդ երիտասարդների շարքերը, որոնց մասին մենք հրաշալի զովեստի խոսքեր ենք լսելու: Հավատացած եղեք, հարազատ բուհը ուրախ է Ձեր հաջողություններով և սպասում է Ձեր վերադարձին: Խաղաղ երկինք Ձեզ և բարի ծառայություն:

Ինչ վերաբերում է Ձեզ՝ զինծառայությունն ավարտած մեր սիրելի ուսանողներ, շնորհավորում ենք Ձեզ և ցանկանում, որ նոր ջերմեռանդությամբ անցնեք ուսումնական գործընթացի շարունակությանը»,- ասվում է ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքում:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ